

նաց եւ ռամկաց, անընդդիմական ի հակառակորդաց ըստ տուեցելոյ նորա ի վերուստ շնորհի՝ ուսուցանէր ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ, եւ զամենայն ոգի քրիստոսասէրս եւ ոգեղէնս վառէր. եւ բազում բանդականաց եւ կալանականաց եւ տագնապելոց ի պէսպէս վտանգից՝ փրկութիւն ընծեռեաց, կորզելով զտարակուսեալսն ահաւորութեամբ զաւրութեամբ փառացն Քրիստոսի՝ ի գովեստ փրկութեան Աւետարանին. եւ բազում մուրհակս անիրաւագիրս պատառեաց. եւ զբազում սգաւորս եւ կարճամիտ միախառնեաց վարդապետութեամբն եւ նուաճեաց ակնկալութեամբ՝ յուսոյն ի համբերութիւնն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի. եւ զամենայն հաւատացեալս միանգամայն զարս եւ զկանաչս յաստուածպաշտութեան պայման անդր փոխադրեաց:

59 Եւ [եւ] դարձեալ անհամար եւ գունդս գունդս ի շէնս եւ յանշէնս ի ճշմարտութեան աւանդս սուրբ հարցն հաստատէր ի փառս եւ ի գովեստ ամենասուրբ Երրորդութեան: 60 Նա եւ (ի) դաշտականս եւ լեռնականս, անձաւամուտս եւ լեռնականս եւ արգելականս, բնակեցուցեալ կրանաւորիլ առ ի բարեպաշտութեանն ջանս, զոր ոչ միայն բանիւք եւ վարդապետութեամբ, այլ եւ արդեամբք գանձն աւրինակ կացուցանէր միանձանց, հանապազորդ պահաւք եւ աղաւթիւք, տքնութեամբ եւ արտասուաւք, խոնարհութեամբ, եւ հեզութեամբ եւ կուսութեամբ նահատակեալ. եւ ընդդէմ հանապազորդեան թշնամոյն քաջապէս արիացեալ. նա եւ ի պատուոյ եւ ի փառաց խոնափեալ, երթեալ սորամուտ ծակախիթ լինէր, եւ զառաւրեայ զկեանսն խոտաբուտ ճաշակաւք վճարէր: 61 Եւ այնպէս վշտակցեալ տկարութեան զանձն իւր տուեալ անհեղգաբար, հայեցեալ ի միախառնութիւն առաքելական խրատուն, թէ՛ *Յորժամ վասն Քրիստոսի տկարանամ՝ յայնժամ զաւրացեալ լինիմ*^ա եւ եթէ՛ Լաւ լիցի ինձ մնալ ի տկարութեան, զի բնակեցէ յիս զաւրութիւնն Քրիստոսի:

62 Անդ էր զուարճանալ հոգւով ուր ուրեք դադարեալ լինէր. եւ ոչ պայծառանայր զհնով, այլ երգաւք հոգեւորաւք ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ. ի կրթութիւնս միշտ քաղցրուսոյց ընթերցուածոց հոգեպատում գրոց, ի քաջալերութիւնս յորդորականս լուսաւոր կարգաց եւ տաւնից զանձինս ճգնաւորացն ամենաշնորհ վարդապետութեամբն զինէր առ ի յառաջադէմ ընտրութիւն պսակահամբար քրիստոսադիր կիտին:

63 Եւ եռայր հոգւով յաստուածպաշտութեանն մրցարան վերին կոյմանն, աղերսալի աղաւթիւք եւ փարելի պաղատանաւք եւ հաշտելի խնդրուածաւք յամենեցունց Տեառնէն, վասն ամենեցուն կենացն յաւիտենականաց արժանի լինել մասին սրբոցն ի լոյս: 64 Եւ նովին հոգեկրան վարուք

^ա Հմմտ. Բ Կոր. ԺԲ 10: